

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Կոմիտաս Վարդապետի 150-ամյա հոբելյանին ընդառաջ 2018 թ. Կոմիտասի թանգարան-ինստիտուտը հրավիրեց մի շարք գիտական միջոցառումներ, այդ թվում՝ «Միջմշակութային երկխոսություն. երաժշտական կրթության ուղիներ» միջազգային ֆորումը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 14-15-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում և «Կոմիտաս. ավանդականի և ժամանակակիցի խաչմերուկում» միջազգային գիտաժողովը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 28-ին՝ Փարիզի Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում: Սույն հատորը պարունակում է նշված միջոցառումների ընթացքում ներկայացված գեկուցումների ընտրանի:

Կոմիտասին նվիրված մի շատք հոդվածներ անդրադառնում են ազգային երաժշտության և ինքնության հարցերին, Կոմիտասի միջնադարագիտական հետազոտություններին, ֆրանսիական մշակույթի հետ ունեցած նրա առնչություններին, ինչպես նաև Կոմիտասի գրառած՝ Գրիգոր Նարեկացու (X-XI դարեր) տաղերին: Ժողովրդական երաժշտությանը նվիրված ուսումնասիրություններում ներկայացված են հայ իրականության մեջ երաժշտական բանահավաքչության պատմության, հայկական ավանդական օրորներին, ավետիսներին, ինչպես նաև Ալեքսանդրապոլի աշուղական արվեստին նվիրված հարցեր: Հատորում տեղ է գտել նորահայտ մի ստեղծագործության՝ «Վրյ Ալեքսան» պատումի վերաբերյալ հոդված՝ նոտային գրառման ընդգրկմամբ: Եվս մեկ հոդվածում բացահայտվում է երաժշտական որոշ եզրերի ստուգաբանությունը: Երաժշտական կրթությանը վերաբերող գլխում ներկայացվում են ինչպես Կոմիտասի, այնպես էլ XX դարի խոշորագույն երաժիշտ-մանկավարժներից մեկի՝ գերմանացի կոմպոզիտոր Կարլ Օրֆի մանկավարժական սկզբունքները:

Հատորում ընդգրկված են հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն հոդվածներ: Յուրաքանչյուր հոդվածին հաջորդում են հայերեն և անգլերեն ամփոփումներ:

Հասցեագրված է երաժիշտներին, երաժշտագետներին, արվեստաբաններին, լեզվաբաններին, երաժշտական կրթության մասնագետներին, մանկավարժներին, ինչպես նաև առհասարակ հայ երաժշտությամբ հետաքրքրվողներին:

INSTEAD OF A PREFACE

In preparation for the 150th anniversary of the birth of Komitas Vardapet, the Komitas Museum–Institute hosted a number of scholarly events, including *Intercultural Dialogue: Music Education Paths* International Forum (September 14–15, Komitas Museum–Institute, Yerevan) and *Komitas: at the Crossroads of Tradition and Modernity* International Conference (September 28, Grand Salon of Sorbonne University, Paris). This volume involves selected proceedings of papers presented at those events.

The papers devoted to Komitas refer to the issues of national musical identity paradigm, to medieval studies by Komitas, to his relationships with French culture, as well as to the *taghs (tal)* by Grigor Narekatsi (X–XI centuries), which were transcribed by Komitas. In the papers on folk music, issues related with the history of music collections, traditional Armenian lullabies, carols (Arm. *avetis*), as well as *ashugh (aşuġ)* art in Alexandropol are presented. The volume includes a paper on a newly invented folk ballad, *Vuy Alek'san*, which is illustrated by musical score. In a paper on linguistics, the etymology of some musical terms is expounded. The chapter on music education rethinks the music pedagogical principles of not only Komitas, but also Carl Orff, who was one of the prominent musician–pedagogues of the XX century.

The articles are in Armenian, Russian, English, and French. Armenian and English abstracts follow each paper.

The volume is addressed to musicians, musicologists, art historians, linguists, specialists on music education, and pedagogues and reaches out to a wider range of readers interested in Komitas's activity, folk music, and music pedagogy.